ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևան քաղաքի <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ -	Շինարարական աշխատանքների ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 պայմանագրի ընդհանուր գնից կանխավճարի տրամադրում:
Փոփոխության նկարագրություն -	Պայմանագրի 4.1 կետում ավելացվել է նոր ենթակետ համաձայն որի՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում պայմանագրի ընդհանուր գնից մինչև 1 426 940 ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:
Փոփոխության հիմնավորում-	Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

/ 30.12.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 գնման պայմանագրի/

ք. Երևան 20 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ի միջև 30.12.2015թ. կնքված Երևան քաղաքի <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.3 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 1 426 940 (մեկ միլիոն չորս հարյուր քսանվեց հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամի չափով՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2017 թվականին մատուցվելիք ծառայության գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011856 ՀՎՀՀ 02565827	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, <<Կիևյան>> մասնաճյուղ Հ/Հ 11500498836200, ՀՎՀՀ 02235628
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան _____ ստորագրություն	Ս. Մարգարյան _____ ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.

N 7909-02

«22» 12 2017

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի** (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և **ԲԱԳԱՐԱՆԻ ԲԱՐԻՔ ՓԲԸ-ի** (Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Բագարան, ՀՎՀՀ՝ 02235628) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված **Երևան քաղաքի Հրանտ Մաթևոսյան մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայության N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/47 պետական գնման պայմանագրից և և դրա անբաժանելի մասը կազմող թիվ 2 համաձայնագրից** (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել **1,426,940 (մեկ միլիոն չորս հարյուր քսանվեց հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 11500498836200 հ/հ-ին փոխանցելու պահից և գործում է մինչև **20.03.2018թ. ներառյալ:**

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ բոլոր վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան